ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքիև և սոցիալակն հարցերի նախարարի 2016թ. փետրվարի 11-ի թիվ 25-Ն և 2016թ.-ի հունիսի 14-ի թիվ 64-Ն հրամանները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Ավանի տարածքային բաժինը / այսուհետև՝ ՍԱՏԲ/ սոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով տարածաշրջանում համաձայնագրի կողմեր հանդիսացող սուբյեկտներին՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպություններին, ինչպես նաև ֆիզիկական անձանց /այսուհետև՝ Կողմոր/ հրավիրում են հայտագրվելու ևձևավորելու համակարգող խորհուրդ/այսուհետև՝ Խորհուրդ/:

Խորհրդի կազմում պարտադիր ընդգրկվում են տարածաշրջանում գործող, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշման 1-ին կետով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների մեկական ներկայացուցիչներ, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ներկայացուցիչներ և ֆիզիկական անձինք:

Խորհուրդը գործելու է խորհրդի անհատական կազմը ձևավորելուց հետո երկու տարի ժամկետով:

Կողմերը խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ իրենց առաջարկությունները /հայտերը/ կարող են ներկայացնելԵրևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Ավանի տարածքային բաժին մինչև 2020թ.-ի փետրվարի 15-ը/ հասցե Խուդյակով փողոց 222 հեռ. 011-518-132:

Հայտագրման համար ներկայացվող նվազագուն պահանջներն են.

ա/սոցիալական աջակցության բնագավառում գործունեության փորձը,

բ/սոցիալական ծառայություններ տրամադրման ծրագրերի իրականացումը

Գործընթացի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներառված է Տարածքային մակարդակով սոցիալական համագործակցության Համաձայնագրում:

<<Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի

Ավանի սոցիալական աջակցության

տարածքային բաժին>>